ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

e-mail:ararathnaberd@yandex.ru

հեռ. 098025050

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 23-Ն

06 դեկտեմբերի 2012 թվական

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՈՒ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ, 26-րդ կետերի պահանջներով ,ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1կետի 1) ենթակետի բ)կետով, համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել Հնաբերդ համայնքի ղեկավար Մարատ Պողոսյանի կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը համաձայն հավելված 1-ի.

2. Համայնքի ղեկավարի աշխատավարձը սահմանել 109000 դրամ:

3. Հաստատել Համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Հնաբերդի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը , հաստիքացուցակը ու պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված 2-ի.

4. Ուժը կորցրած ճանաչել Հնաբերդ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին 2012թ.-ի հունիսի 22-ի թիվ 3/2-Ն,պետական ռեգիստրում գրանցման մասին 2012թ.-ի հունիսի 22-ի թիվ 3/3-Ն, Հնաբերդ համայնքի ավագանու աշխատակիցների քանակը , հաստիքացուցակը ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին 2011թ.-ի դեկտեմբերի 15-ի թիվ 13-Ն որոշումները:

5.Առաջարկել համայնքի ղեկավարին «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկը գրանցել պետ. ռեգիստրում և կատարել դրա հետ կապված բոլոր գործառույթները:

Ավագանու անդամներ՝

Դ. Դավթյան

Մ. Զաքարյան

Գ. Կիրակոսյան

Վ. Սիմոնյան

Համայնքի ղեկավար՝ Մ. Պողոսյան

Հավելված 2.
Հնաբերդ համայնքի ավագանու
2012թ.- դեկտեմբերի 6-ի թիվ 23/3-Ն որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ՀՀ Արարատի մարզի Հնաբերդի գյուղապետարանի 2013թ.աշխատակազմի աշխատողների աշխատանքի վարձատրության դրույքաչափերի մասին

N	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Ամսական աշխատավ. գումարը	տարեկան աշխատավ. գումարը	ծանոթություն
1	Համայնքի ղեկավար		110 000	1 320 000	
2	Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար 1.2.1	1	88 000	1 056 000	
3	Աշխատակազմի առաջատար մասնագետ 3.1.1	1	86 000	1 032 000	
4	Հարկահավաք-գանձապահ	1	50 000	600 000	
5	Ակումբավար	1	46 300	555 600	
6	Գրադարանավար	1	46 300	555 600	
7	Հավաքարար	1	46 300	555 600	
8	Պահակ	1	46 300	555 600	
	Ընդամենը	8	519 200	6 230 400	

Գյուղապետարանի աշխատակազմի
քարտուղարի պաշտոնակատար Հ. Ղազարյան